ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 93 – Ա 14 փետրվարի 2019 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշումը՝

**Որոշում եմ՝**

1. 2019 թվականի փետրվարի 27-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լևոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոնում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝«Հրդեհաշիջման կազմակերպում և տարահանման աշխատանքների իրականացում մշակութային օբյեկտից» թեմայով:
2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Գևորգ Գալստյանին:
3. Ուսումնավարժությանը ներգրավել՝
   1) Լևոն Քալանթարյանի անվան դրամատիկական թատրոնի անձնակազմին
   2) «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից՝ աղետների բժշկության 1 խումբ.
   3) ՀՀ ոստիկանության Գավառի բաժնից՝ 1 խումբ.
   4) <<Գավառի ԳԳՄ>> վթարավերականգնողական ծառայությունից՝ 1 խումբ.
   5) <<Գավառի էլեկտրական ցանցեր>> ընկերությունից՝ 1 խումբ.
4. Հաստատել՝

1) Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝համաձայն հավելված 1-ի.

2) Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նմանակողների կազմը՝համաձայն հավելված 2-ի.

3) Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլանը ՝ համաձայն հավելված 3-ի.

5. Ուսումնավարժության ղեկավար, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Գ. Գալստյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը.

2) կազմակերպել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2019 թվականի փետրվարի 15-ը:

Недействительная подпись

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Подписано: SANOSYAN GNEL 1718830089

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«14» 02 2019թ.
N 93-Ն որոշման

# ԿԱԶՄ

## ՅՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

| ՀՀ | Պաշտոնը ղեկավարման շտաբում | փ/ծ կոչում նուն, ազգանուն | Զբաղեցրած հաստիքային պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ | փ/ծ կապիտան Ա.Պետրոսյան | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ |
| 2 | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի անդամ կապի կազմակերպման գծով | փ/ծ մայոր Վ.Գորոյան | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ |
| 3 | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի անդամ փաստաթղթերի մշակման գծով | փ/ծ լեյտենանտ Լ.Պիպոյան | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ |
| Գործնական միջոցառումների կազմակերպման խումբ | | | |
| 4. | Խմբի պետ | փ/ծ կապիտան Ա.Սիմոնյան | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ |
| 5. | Խմբի անդամ | փ/ծ փոխգնդապետ Ա.Բարսեղյան | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ թիվ 31 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար |

X
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

13.02.2019

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«14» 02 2019թ.
N 93-Ա որոշման

# Կ Ա Զ Մ
# ԶՈՐԱՅԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՄԱՆԱԿՈՂՆԵՐԻ ԽՄԲԻ

| ՀՀ | Պաշտոնը ուսումնավարժությունում | փ/ծ կոչում անուն, ազգանուն | Զբաղեցրած հաստիքային պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | խմբի պետ | փ/ծ կապիտան Տոնոյան Հովհաննես | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի խմբի պետ |
| 2 | խմբի անդամ | փ/ծ ավագ Հովհաննիսյան Ռոբերտ | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի օղակի հրամանատար |
| 3 | խմբի անդամ | փ/ծ ավագ սերժանտ Մալխասյան Ժորա | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ թիվ Գավառի 31 ՀՓՋ-ի ավագ հրշեջ |
| 4 | խմբի անդամ | փ/ծ սերժանտ Սինեյան Արսեն | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի հրշեջ՝ ընդհանուր պրոֆիլի փրկարար |
| 5 | խմբի անդամ | փ/ծ սերժանտ Ասատրյան Վազգեն | ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի վարորդ |

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄՆԱՑԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«14» 02 2019թ.
N 93-Ա որոշման

# ՊԼԱՆ

## ՅՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱՆՔԻ

**Վարժանքի թեման՝** «Հրդեհաշիջման կազմակերպում և տարահանման աշխատանքների իրականացում» թեմայով

**Ուսումնական նպատակները՝**

1. Վարժանքի ընթացքում ստուգել և կատարելագործել ՀՓՋ-ի 4-րդ խմբի անձնակազմի ունակությունները՝ իրենց առջև դրված հրշեջ մարտավարական և փրկարարական խնդիրների լուծման ուղղությամբ:

2. Կատարելագործել ՀՓՋ-ի խմբի պետերի, օղակների հրամանատարների կազմակերպչական և գործնական ունակությունները հրդեհաշիջման ժամանակ:
3.Գավառի թատրոնի տան հրդեհաշիջման քարտի իրատեսության ստուգում:

**Վարժանքի մասնակիցների կազմը՝** Գավառի թիվ 31 ՀՓՋ –ի 4-րդ խումբ , Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի սպայական կազմ, Գավառի թատրոնի տան անձնակազմ:

**Վարժանքի անցկացման օրը և ժամը՝** $12^{00}$ - $13^{05}$ 27.02.2019թ.

**Վարժանքի անցկացման վայրը՝** ք. Գավառ Կենտրոնական հրապարակ 8

**Նյութատեխնիկական ապահովումը՝** Հրշեջ փրկարարական ջոկատի մարտական հաշվարկի հրշեջ ավտոմոբիլ, հրշեջ տեխ. զինվածություն, սարքավորումներ, ձեռքի ռադիոկայաններ:

Ելակետային տվյալներ

Վարչական շենքը 2500մ$^2$ երկհարկանի/եռահարկանի, քարաշեն, երկաթբետոնյա ծածկով շինություն է: ՀՓՋ-ից ուսումնավարժության վայր 5 կմ է: Շենքի հրդեհաշիջման համար որպես ջրաղբյուր ծառայում է Գավառագետը, որը հրդեհի վայրից 0,5 կմ հեռավորության վրա է գտնվում: Հատակը ՝ լամինատ և սալիկապատ է, ջեռուցումը բնական գազով ավտոմատ գազի կաթսա (BAXI): Ունի ներքին ջրամատակարարման ցանց: Թատրոնի աշխատակազմը 36, իսկ դահլիճի նստատեղերի քանակը 370 տեղ: Հիմնական այրվող նյութերը՝ գույք լամինատե հատակը, բեմը և վարագույրները: Շենքը ունի <<SOS>> համակարգ:

**Հրդեհաշիջման անցկացման կարգը**

| ժամը | Ուսումնական հարցերը | Ստեղծված իրավիճակը | ՈՒսուցանվողների գործողությունները | ՈՒսումնավարժության ղեկավարի գործողությունները |
|---|---|---|---|---|
| 1 | | 2 | 3 | 4 |
| 12:00 | Ահազանգում, ուժերի և միջոցների ներգրավում: | Գավառի թիվ 31 ՀՓՋ հեռախոսային կապով հաղորդում է ստացվում, որ ք. Գավառ Կենտրոնական հրապարակ 8 հասցեում գտնվող Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոնում հրդեհ է բռնկվել: | ՀՓՋ-ի հեռախոսավարը ազդարարում է հրդեհի մասին: Անձնակազմը, վերցնելով թատրոնի տան հրդեհաշիջման քարտը և ուսումնավարժանքի պլանը, մեկնում է հրդեհի վայր: | Հսկում է տեղեկատվության ճիշտ փոխանցմանը: |
| 12:02 | Մեկնում կանչի վայր, օպերատիվ փաստաթղթերի ուսումնասիրում: | ՀՓՋ-ի հեռախոսավարը հրդեհի վայր մեկնող խմբի պետին հաղորդում է, որ ըստ ստացված տեղեկության, հրդեհը բռնկվել է թատրոնի տան 2-րդ հարկի հարավ արևմտյան հատվածի սենյակներից մեկում: | ՀՓՋ-ի խմբի պետը և օղակի հրամանատարը ընթացքում ուսումնասիրում են տվյալ օբյեկտի վերաբերյալ փաստաթղթերը և ստացված տվյալները: | Հսկում է ջոկատի՝ հրդեհի վայր մեկնելու ընթացքը: |
| 12:08 | Հետախուզում, | Հրդեհի վայրում թատրոնի տան ղեկավարը դիմավորում է | Հրդեհաշիջման ղեկավարը, կատարելով հետախուզում | Տեղում հետևում է ստեղծված իրավիճակին և կատարվելիք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | իրավիճակի գնահատում: | անձնակազմին և առավել կոնկրետ տեղեկատվություն է հայտնում ստեղծված իրավիճակի մասին: | տալիս է լրիվ բացազատման հրաման, գնահատելով իրավիճակը, այդ մասին հայտնում է ՀՓՋ-ի հեռախոսավարին: | գործողությունների ընթացքին: |
| 12:13 | Հրդեհաշիջման կազմակերպում, տարահանման աշխատանքների կատարում: | Այրվում է թատրոնի տան հարավ-արևմտյան կողմում գտնվող սենյակներից մեկը մոտ 100 մ² | Օղակի հրամանատարը և երկու հրշեջ-փրկարար կատարում են հետախուզության աշխատանքներ, իսկ 2-րդ օղակի հրամանատարը և երեք հրշեջ-փրկարար կատարում են տարահանման աշխատանքներ | Ընդունում է հետախուզության տվյալները և որոշում հրդեհաշիջման վճռական ուղղությունը: |
| 12:36 | Հրդեհի մեկուսացում: | Կրակի տարածումը կանխված է հրդեհի վայրում գտնվող ուժերն ու միջոցները բավարար են հրդեհի լրիվ մարման համար: | Հրդեհաշիջման ղեկավարը ՀՓՋ-ի հեռախոսավարին հայտնում է հրդեհի մեկուսացման մասին ապա շարունակում է հրդեհաշիջման աշխատանքը: | Ուսումնավարժանքի ղեկավարը կարգադրում է շարունակել հրդեհաշիջումը, հետևում է անձնակազմի կողմից իրականացվող գործողությունների ընթացքին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12:52 | Հրդեհի մարում: | Հրդեհը մարված է, մարդկանց տարահանումը կատարված է, նրանց կյանքին վտանգ չի սպառնում: | Հրդեհաշիջման ղեկավարը ՀՓՋ-է հայտնում հրդեհի մարման մասին: Անձամբ ստուգում է հրդեհի վայրը և կարգադրում է մարտական վիճակի բերել տեխ. զինվածությունը: | Ամփոփվում է վարժանքի արդյունքները, գնահատվում է ուսուցանվողների գործողությունները, նշվում է թերությունների մասին, տրվում է հանձնարարականներ՝ թերությունները վերացնելու ուղղությամբ և հայտարարվում է վարժանքի ավարտը: |
| 12:54<br>12:59 | Աշխատանքների ավարտ, ամփոփում: | | Հրդեհաշիջման ղեկավարը տալիս է աշխատանքների ավարտ, տեղում հակիրճ ամփոփում է հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների արդյունքները և տրվում է վերադարձի հրաման: | |
| 13.05 | Վերադարձ | | | |

Недействительная подпись

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007380049

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ